ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«09» դեկտեմբերի2024թ. № 1178

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՈՒՐԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-095-0022-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,123 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման թիվ 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման հաստատված փաստաթուղթը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 01/111.6/07387-2024 գրությունը, ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 01/111.6/09597-2024 գրությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12092017-06-0025 վկայականը և Հովհաննես Սուրիկի Մանուկյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հովհաննես Սուրիկի Մանուկյանին (ծնված՝ 12.11.1993թ.) սեփականության իրավունքով պատկանող, 06-095-0022-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,123 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշումը տրամադրել ՀՀ Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 9
ք.Սպիտակ